ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՄԵԾԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Մեծավան համայնք, Զ. Անդրանիկի N2 էլ. metsavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«25» դեկտեմբերի 2019 թ. N 54–Ա

ՄԵԾԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածով՝ Մեծավան համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

Հաստատել Մեծավան համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 25-ի արտահերթ նիստի օրակարգը՝

1. Մեծավան համայնքի ավագանու 2019թվականի դեկտեմբերի 25-ի արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին
2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մեծավան համայնքում 2020 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին
3. Մեծավանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքական, հայեցողական, համայնքային ծառայության պաշտոններ զբաղեցնող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին
4. Մեծավանի համայնքապետարանին ենթակա ՀՈԱԿ-ների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին
5. ՀՀ Լոռու մարզի Մեծավան համայնքի «Մշակույթի կենտրոն» բյուջետային հիմնարկի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին
6. Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական օգնություն հատկացնելու մասին
7. Լոռու մարզի Մեծավան համայնքի 2020թվականի տարեկան բյուջեն հաստատելու մասին

N/N	ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ	ԿՈՂՄ՝	ԴԵՄ՝	ՁԵՌՆՊԱՀ՝
1	ԲԵՋՈՅԱՆ ՀՈՎՍԵՓ			
2	ԳԶԻՐԱՆՑ ԷԼԼԱ			
3	ՄԱՂԱՔՅԱՆ ՄԱՐՏԻՆ			
4	ՄԽՈՅԱՆ ԱԼՎԱՐԴ			
5	ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԶԱՎԵՆ			
6	ՍՈՒՔԻԱՍՅԱՆ ՍՈՒՐԵՆ			
7	ՓԵԹԱԿՉՅԱՆ ՎԱՀԱՆ			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ՝ Ա. ԴՈՒՄԻԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Մեծավան համայնք, Զ. Անդրանիկի N2 էլ. metsavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<25>> դեկտեմբերի 2019 թվականի N 55-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ և 19-րդ կետերով, <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ հոդվածներով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածով՝ Մեծավան համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մեծավան համայնքում 2020 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

N/N	ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ	ԿՈՂՄ՝	ԴԵՄ՝	ՁԵՌՆՊԱՀ՝
1	ԲԵՋՈՅԱՆ ՀՈՎՍԵՓ			
2	ԳԶԻՐԱՆՑ ԷԼԼԱ			
3	ՄԱՂԱՔՅԱՆ ՄԱՐՏԻՆ			
4	ՄԽՈՅԱՆ ԱԼՎԱՐԴ			
5	ՆԱՀԱՊԵՏԱՆ ԶԱՎԵՆ			
6	ՍՈՒՔԻԱՍՅԱՆ ՍՈՒՐԵՆ			
7	ՓԵԹԱԿՉՅԱՆ ՎԱՀԱՆ			
8				

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ՝ Ա. ԴՈՒՄԻԿՅԱՆ

Հավելված՝
Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Մեծավան համայնքի ավագանու
2019 թվականի դեկտեմբերի 25 -ի թիվ 55 -Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ, ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար.

ա. հիմնական շենքերի և շինությունների համար՝

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ յոթ հազար հինգհարյուր դրամ

բ. սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ տասհինգ հազար դրամ,
- 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ քսանհինգ հազար դրամ,
- 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ քսանհինգ հազար դրամ,
- 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հիսուն հազար դրամ.

գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հազար հինգ հարյուր դրամ,
- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ երկու հազար հինգ հարյուր դրամ

2) համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն հազար հինգ հարյուր դրամ,

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.

3) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ երկու հազար **հինգ հարյուր դրամ**.

4) համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հարյուր հազար դրամ.

5) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ երեսուն հազար դրամ.

6) համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ քսանհինգ հազար դրամ.

7) համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ հինգ հազար մեկ դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ վեց հազար դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յոթ հազար հինգ հարյուր դրամ

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասմեկ հազար դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ երեսուն հազար դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ երեսուն հազար դրամ.

բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ հինգ հազար դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ վեց հազար դրամ

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յոթ հազար հինգ հարյուր դրամ

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասմեկ հազար դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասհինգ հազար դրամ

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսանհինգ հազար դրամ.

8) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ երեքհարյուր դրամ

9) համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. առևտրի օբյեկտների համար՝ տասհինգ հազար դրամ

բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ քսանհինգ հազար դրամ

գ. բաղնիքների (սաունաների) համար՝ հարյուր հազար դրամ

դ. խաղատների համար՝ հինգ հարյուր դրամ,

ե. շահումով խաղերի համար՝ հարյուր քսանհինգ հազար դրամ,

զ. վիճակախաղերի համար՝ հիսուն հազար դրամ.

10) համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երկու հազար հինգ հարյուր դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հինգ հազար դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ յոթ հազար դրամ

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասնհինգ հազար մեկ դրամից մինչև քսան հազար մեկ դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ քսանհինգ հազար դրամ

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ քառասուն հազար

բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հազար դրամ

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հազար երկու հարյուր դրամ

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երկու հազար հինգ հարյուր դրամ

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հինգ հազար դրամ

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տաս հազար դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասնյոթ հազար դրամ

11) ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ միջպետական ու հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երկու հազար դրամ

բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երեք հազար հինգ հարյուր դրամ

գ. սոցիալական գովազդի համար՝ զրո դրամ,

դ. այլ արտաքին գովազդի համար՝ հազար հինգ հարյուր դրամ,

ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով,

զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ի չափով.

12) Հայաստանի Հանրապետության համայնքների խորհրդանիշերը (զինանշան, անվանում և այլն), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հիսուն հազար դրամ.

13) համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ հինգ հազար դրամ.

14) համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ երկու հարյուր հիսուն հազար դրամ.

15) համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ մեկ միլիոն երկու հարյուր քսանհինգ հազար դրամ

բ. 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ երկու հարյուր հիսուն հազար դրամ,

գ. 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ երեք հարյուր հիսուն հազար դրամ

դ. 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ հինգ միլիոն դրամ

ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐ

1) համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 3000 դրամ,

2) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 3000 դրամ,

3) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 5000դրամ,

4) համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 2000դրամ,

5) համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 1000 դրամ,

6) համայնքի վարչական տարածքում տոնավաճառներին (վերնիսաժներին) մասնակցելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար 500 դրամ,

7) համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար աղբահանության վճարը՝

ա.կենցաղային աղբի համար՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար վճար՝ ամսական 100 դրամ,

բ. ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ 2000 դրամ,

8) համայնքի կողմից իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման, ինչպես նաև աղբահանության վճար վճարողներին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի ինքնուրույն հավաքման և փոխադրման թույլտվության համար աղբահանության վճար՝ ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի մեկ խորանարդ մետր համար սահմանված դրույքաչափի 20 %-ի չափով՝ 400դրամ,

9) համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցում 3000դրամ զումարի չափով.

10) համայնքային ենթակայության արտադպրոցական դաստիարակության հաստատությունների (երաժշտական, նկարչական և արվեստի դպրոցներ և այլն) ծառայություններից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցում 2000 դրամ զումարի չափով.

11) համայնքի վարչական տարածքում, սակայն համայնքի բնակավայրերից դուրս գտնվող՝ ավագանու որոշմամբ հանրային հանգստի վայր սահմանված և համայնքի կողմից կամ համայնքի պատվերով որպես հանրային հանգստի վայր կահավորված տարածքում ընտանեկան կամ գործնական միջոցառումներ անցկացնելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար 500 դրամ

12) համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար՝ հինգ հարյուր դրամ փոխհատուցման վճար:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Հ.ՔԱՉԱԿՈՒԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Մեծավան համայնք, Զ. Անդրանիկի N2 էլ. metsavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 25 » դեկտեմբեր 2019 թ. N 56–Ա

ՄԵԾԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով՝ Մեծավան համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. Հաստատել Մեծավանի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, քաղաքական, հայեցողական, համայնքային ծառայության պաշտոններ զբաղեցնող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն NN 1-2 հավելվածների:
2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մեծավան համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 24-ի «Մեծավանի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, քաղաքական, հայեցողական, համայնքային ծառայության պաշտոններ զբաղեցնող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 6- Ա որոշումը:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 2020թվականի հունվարի 1-ից:

N/N	ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ	ԿՈՂՄ՝	ԴԵՄ՝	ՁԵՌՆՊԱՀ՝
1	ԲԵԶՈՅԱՆ ՀՈՎՍԵՓ			
2	ԳԶԻՐԱՆՑ ԷԼԼԱ			
3	ՄԱՂԱՔՅԱՆ ՄԱՐՏԻՆ			
4	ՄԽՈՅԱՆ ԱԼՎԱՐԴ			
5	ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԶԱՎԵՆ			
6	ՍՈՒՔԻԱՍՅԱՆ ՍՈՒՐԵՆ			
7	ՓԵԹԱԿՉՅԱՆ ՎԱՀԱՆ			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ՝ Ա. ԴՈՒՄԻԿՅԱՆ

Հավելված 1
ՀՀ Լոռու մարզի
Մեծավան համայնքի ավագանու
2019թ. դեկտեմբերի 25-ի N56 -Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՎԱՆԻ
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

1. Ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժին

Աշխատակազմի քարտուղարի
պաշտոնակատար Հ.Քաչակուլյան

Հավելված 2
ՀՀ Լոռու մարզի
Մեծավան համայնքի ավագանու
2019թ. դեկտեմբերի 25-ի N 56-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ, ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Աշխատակիցների թվաքանակը՝ 27

Հ/Հ	ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (սահմանվում է հաստիքային մեկ միավորի համար)
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ			
1.	Համայնքի ղեկավար	1	350.0
2.	Վարչական ղեկավար Պադաղբույր	1	132.0
3	Վարչական ղեկավար Զյունաշող	1	132.0
4	Վարչական ղեկավար Միխայլովկա	1	165.0
5	Համայնքի ղեկավարի տեղակալ	1	180.0
6	Համայնքի ղեկավարի խորհրդական	1	150.0
7	Համայնքի ղեկավարի օգնական	1	150.0
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ			
8.	Աշխատակազմի քարտուղար	1	210.0
Ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժին			
9.	Բաժնի պետ	1	170.0
10.	Առաջատար մասնագետ	4	130,0
Աշխատակազմ (կառուցվածքային ստորաբաժանումների մեջ չներառված պաշտոններ)			
11.	Գլխավոր մասնագետ	1	135.0
12	Գլխավոր մասնագետ-աուդիտոր	1	135.0
13	Առաջին կարգի մասնագետ	2	120,0
14	Երկրորդ կարգի մասնագետ	5	110,0
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄ			
15.	Հավաքարար	1	96.0
16.	Դռնապահ	1	96.0
17.	Վարորդ	1	110.0
18.	Հնոցապահ	0,5	60.0
19.	Փականագործ	1	96.0
	ԸՆԴԱՄԵՆԸ	26,5	

Աշխատակազմի քարտուղարի
պաշտոնակատար Հ.Քաչակուլյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Մեծավան համայնք, Ջ. Անդրանիկի N2 էլ. metsavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«25» դեկտեմբերի 2019 թվականի N 57-Ա

ՄԵԾԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻՆ ԵՆԹԱԿԱ ՀՈԱԿ-ՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 28-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով՝ Մեծավան համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Հաստատել Մեծավանի համայնքապետարանին ենթակա ՀՈԱԿ-ների՝ «Մեծավանի «Զանգակ» մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի և «Մեծավանի Արվեստի դպրոց» ՀՈԱԿ-ի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածների:
2. Ուժը կորցրած ճանաչել 2017թվականի դեկտեմբերի 27-ի «Մեծավանի համայնքապետարանին ենթակա ՀՈԱԿ-ների աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 17-Ա որոշումը:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 2020թվականի հունվարի 1-ից:

N/N	ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ	ԿՈՂՄ՝	ԴԵՄ՝	ՁԵՌՆՊԱՀ՝
1	ԲԵՋՈՅԱՆ ՀՈՎՍԵՓ			
2	ԳԶԻՐԱՆՑ ԷԼԼԱ			
3	ՄԱՂԱՔՅԱՆ ՄԱՐՏԻՆ			
4	ՄԽՈՅԱՆ ԱԼՎԱՐԴ			
5	ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԶԱՎԵՆ			
6	ՍՈՒՔԻԱՍՅԱՆ ՍՈՒՐԵՆ			
7	ՓԵԹԱԿՉՅԱՆ ՎԱՀԱՆ			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ՝ Ա. ԴՈՒՄԻԿՅԱՆ

Հավելված 1
ՀՀ Լոռու մարզի
Մեծավան համայնքի ավագանու
2019թ. դեկտեմբերի 25-ի N 57-Ա որոշման

ՀՀ Լոռու մարզի Մեծավան համայնքի «Զանգակ» մանկապարտեզ ՀՈԱԿ-ի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

աշխատողների քանակը՝ 9

Թիվ	Հաստիքի անվանումը	Հաստիքային միավոր	դրույքաչափ /ՀՀ հազար դրամ/
1	Տնօրեն	1	125.0
2	Դաստիարակ	1.12	107.5
3	Երաժիշտ-դաստիարակ	0.25	22.5
4	Դայակ,դաստիարակի օգնական	1	90.0
5	Խոհարար	1	90.0
6	Հաշվապահ	0.5	45.0
7	Դռնապահ	1	90.0
8	Տնտեսվար	0.25	25.0
9	Հավաքարար	0.5	45.0
		6.62	640,0

Աշխատակազմի քարտուղարի
պաշտոնակատար Հ.Քաչակուլյան

Հավելված 2
ՀՀ Լոռու մարզի
Մեծավան համայնքի ավագանու
2019թ. դեկտեմբերի 25-ի N 57-Ա որոշման

ՀՀ Լոռու մարզի Մեծավան համայնքի «Արվեստի դպրոց» ՀՈԱԿ-ի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

աշխատողների քանակը՝6

Թիվ	*Հաստիքի անվանումը*	*Հաստիքային միավոր*	*դրույքաչափը /ՀՀ հազար դրամ/*
1	Տնօրեն	1	*110.0*
2	Երաժշտական գրականության և դաշնամուրի ուսուցչուհի	1	*90.0*
3	Սոլֆեջոյի և դաշնամուրի ուսուցչուհի	1	*90.0*
4	Հաշվապահ	0,5	*60.0*
5	Դռնապահ	1	*90.0*
6	Հավաքարար	1	*90.0*
	Ընդամենը	5,5	*530,0*

Աշխատակազմի քարտուղարի
պաշտոնակատար Հ.Քաչակուլյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Մեծավան համայնք, Զ. Անդրանիկի N2 էլ. metsavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«25» դեկտեմբերի 2019 թվականի N 58-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՎԱՆԻ <<ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ>> ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 28-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով՝ Մեծավան համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Հաստատել ՀՀ Լոռու մարզի Մեծավան համայնքի <<Մշակույթի կենտրոն» բյուջետային հիմնարկի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել 2018թվականի հունվարի 19-ի «ՀՀ Լոռու մարզի Մեծավան համայնքի <<Մշակույթի կենտրոն» բյուջետային հիմնարկության աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 2-Ա որոշումը:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 2020թվականի հունվարի 1-ից:

N/N	ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ	ԿՈՂՄ՝	ԴԵՄ՝	ՁԵՌՆՊԱՀ՝
1	ԲԵՋՈՅԱՆ ՀՈՎՍԵՓ			
2	ԳԶԻՐԱՆՑ ԷԼԼԱ			
3	ՄԱՂԱՔՅԱՆ ՄԱՐՏԻՆ			
4	ՄԽՈՅԱՆ ԱԼՎԱՐԴ			
5	ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԶԱՎԵՆ			
6	ՍՈՒՔԻԱՍՅԱՆ ՍՈՒՐԵՆ			
7	ՓԵԹԱԿՉՅԱՆ ՎԱՀԱՆ			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ՝ Ա. ԴՈՒՄԻԿՆՅԱՆ

Հավելված
ՀՀ Լոռու մարզի
Մեծավան համայնքի ավագանու
2019թ. դեկտեմբերի 25-ի N 58-Ա որոշման

ՀՀ Լոռու մարզի Մեծավան համայնքի « Մշակույթի կենտրոն» բյուջետային հիմնարկության աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը աշխատողների քանակը՝ 7

Թիվ	*Հաստիքի անվանումը*	*Հաստիքային միավոր*	*Դրույքաչափը /ՀՀ հազար դրամ/*
1	Տնօրեն	1	125.0
2	Կազմակերպիչ	1	95.0
3	Գեղմասվար	1	95.0
4	Գրադարանավար	0.5	60.0
5	Հաշվապահ	0.5	60.0
6	Դոնապահ	1	90.0
7	Հավաքարար	1	90.0
	Ընդամենը	6	615,0

Աշխատակազմի քարտուղարի
պաշտոնակատար Հ.Քաչակուլյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Մեծավան համայնք, Զ. Անդրանիկի N2 էլ. metsavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<25>> դեկտեմբերի 2019 թվականի N 59-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածին, Մեծավան համայնքի ավագանու 2018 թվականի նոյեմբերի 30-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մեծավան համայնքի կամավոր խնդիրները, կամավոր խնդիրներին ուղղված սեփական լիազորությունները և դրանց լուծման նպատակով իրականացման կարգը սահմանելու մասին» թիվ 46-Ա որոշմանը համապատասխան, հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զոհված զինծառայողների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունները՝ Մեծավան համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն հավելվածի.
2. Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում բնակիչներին վճարել հատկացված գումարները:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

N/N	ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ	ԿՈՂՄ՝	ԴԵՄ՝	ՁԵՌՆՊԱՀ՝
1	ԲԵԶՈՅԱՆ ՀՈՎՍԵՓ			
2	ԳԶԻՐԱՆՑ ԷԼԼԱ			
3	ՄԱՂԱՔՅԱՆ ՄԱՐՏԻՆ			
4	ՄԽՈՅԱՆ ԱԼՎԱՐԴ			
5	ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԶԱՎԵՆ			
6	ՍՈՒՔԻԱՍՅԱՆ ՍՈՒՐԵՆ			
7	ՓԵԹԱԿՉՅԱՆ ՎԱՀԱՆ			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ՝ Ա.ԴՈՒՄԻԿՅԱՆ

Հավելված
ՀՀ Լոռու մարզի Մեծավան համայնքի ավագանու
2019թվականի դեկտեմբերի 25 -ի N59-Ա որոշման

1. Մարկոսյան Ռիտա Ռուբիկի -50.0 հազար դրամ/ սոց. օգնություն /
2. Աղասարյան Արթուր Հրանտի-50.0 հազար դրամ / սոց. օգնություն /
3. Բաղոյան Դավիթ Մարտիկի -80.0հազար դրամ / ուսման վարձ /
4. Պողոսյան Սուրիկ Քերոբի-80.0հազար դրամ / հարազատի հուղարկավորություն/
5. Ավետիսյան Սուսաննա Քերոբի-80,0հազար դրամ / հարազատի հուղարկավորություն/

Աշխատակազմի քարտուղարի
պաշտոնակատար Հ. Քաչակուլյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Մեծավան համայնք, Զ. Անդրանիկի N2 էլ. metsavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«25» դեկտեմբերի 2019 թվականի N 60-Ն

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ **2020** ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18. հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածով՝ Մեծավան համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է.

1.Հաստատել Մեծավան գյուղական համայնքի 2020թ. տարեկան բյուջեն՝

1.1 ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԳՈՎ՝ 182686,7 հազ.դրամ

Այդ թվում՝

- Վարչական բյուջեի մասով՝ 173986,7հազ. դրամ
- Ֆոնդային բյուջեի մասով՝ 8700,0 հազ. դրամ

1.2 ԾԱԽՍԵՐԻ ԳՈՎ ՝ 210686,7 հազ.դրամ

Այդ թվում՝

- Վարչական բյուջեի մասով՝ 173986,7 հազ. դրամ
- Ֆոնդային բյուջեի մասով՝ 36700 հազ. դրամ

2. Հաստատել Մեծավան գյուղական համայնքի 2020թվականի տարեկան բյուջեի եկամուտները ըստ առանձին եկամտատեսակների համաձայն թիվ 1 հատվածի:

3. Հաստատել Մեծավան գյուղական համայնքի 2020թվականի տարեկան բյուջեից հատկացումներն ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման՝ համաձայն թիվ 2 հատվածի:

4. Հաստատել սույն որոշման 3-րդ կետով սահմանված բյուջետային հատկացումների հաշվին ֆինանսավորվող ծախսատեսակներն ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն թիվ 3 հատվածի:

5. Հաստատել սույն որոշման 3-րդ և 4-րդ կետերով սահմանված հատկացումների հաշվին ֆինանսավորվող ծախսերն ըստ առանձին ծրագրերի համաձայն թիվ 4 հատվածի:

6.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող 10-րդ օրը:

N/N	ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ	ԿՈՂՄ՝	ԴԵՄ՝	ՁԵՌՆՊԱՀ՝
1	ԲԵՋՈՅԱՆ ՀՈՎՍԵՓ			
2	ԳԶԻՐԱՆՑ ԷԼԼԱ			
3	ՄԱՂԱՔՅԱՆ ՄԱՐՏԻՆ			
4	ՄԽՈՅԱՆ ԱԼՎԱՐԴ			
5	ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ՋԱՎԵՆ			
6	ՍՈՒՔԻԱՍՅԱՆ ՍՈՒՐԵՆ			
7	ՓԵԹԱԿՉՅԱՆ ՎԱՀԱՆ			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ՝ Ա. ԴՈՒՄԻԿՅԱՆ